ԵՎՊԱՏՈՐԻԱ (ՆԱԽԿԻՆՈՒՄ ԵՎՊԱՏՈՐԻԱ, ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ՝ ԳԵՈԶԼԵՎ, ԿՅՈԶԼԵՎ)

Եվպատորիան եղել է Ղրիմի հայության նշանակալից կենտրոններից մեկը: Մ.Բժշկյանի շրջագայության ժամանակ այստեղ ապրել է 90 հայ ընտանիք[89]: 1765 թ. թաթարներն տյրում են Ս.Նիկողայոս եկեղեցին, որի փոխարեն կառուցվում է ցարդ պահպանվող քարաշեն եկեղեցին (այժմյան՝ Ինտերնացիոնալնայա փողոցում): Եվպատորիայի երկրագիտական թանգարանում մեզ ցույց տվեցին մի Ս.վետարան՝ հրատարակված Կ.Պոլսում, 1763 թ., որի տիտղոսաթերթին կարդացինք հիշատակագրություն այն մասին, որ հիշյալ գիրքը պատկանում է քաղաքի հայ համայնքին և մշտապես պետք է մնա հայոց Ս.Նիկողայոս եկեղեցում: Տաճարի սրահներն այժմ տրամադրված են քաղաքային արխիվին, իսկ ուսումնարանի սենյակներում (1970 թ.) տեղավորված է ծերանոցը, որի աշխատակցուհիներից Վ.Ս.Ժկսիմենկոն մեզ ցույց տվեց ուսումնարանի մուտքի ճակատին ամրացված մարմարակերտ մի սալիկ՝ հետևյալ մակաղրությամբ.

385.

ԿԱՌՈՑՑ/ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՍ/ ՅՈՎԱԿԻՄ ԱՂԱ/ ՍԷՖԷՐԵԱՆ/. 1891 Թ.

Ծանոթ. Հ.Սեֆերյանի ծախսով կառուցվել է նաև Սիմֆերոպոլի հայ օրիորդաց ուսումնարանը (տե՛ս արձ. 328-329):

ԳԱՐԱԴԱՂ (ՍԵՎ ԼԵՌ)

Գտնվում է Սուդակից Թեոդոսիա տանող ճանապարհին, Գյողթեփեի լանջին, Աղիղ կոչված վայրում: Հայերն այստեղ ապրել են XIV-XV դարերից, կառուցել Ս.Ստեփանոս վանքը՝ մենաստանով: Մ.Բժշկյանի օրոք եկեղեցու հիմնապատերը եղել են կանգուն: Տաճարի խորանի շինաքարերից մեկի վրա նա ընթերցել է.

386.

Զառաջին շինող ա[ա]ճ[ա]ր[ի]ս Աւետիք վդե /վարդապե՞տ-Գ.Գ./ պ[ա]ր[ա]գաքահայն յիշ[եաւ] ի Քս:

387. Սրա կողքին՝

Զվերջ նոր[ո]գ[ո]ղ տ[ա]ճ[ա]ր[ի]ս Ստեփ[ա]ն[ո]ս վ[ար]դապետս. գինտիր արեղէս պր. ընտրկի՞ն գպարու Լուքէն Վասատ/ակաւք յիշ[եա] Քս թվ. ՊԾ (1401):

Հրատ. *Բժշկյան, 320*

ԽԱՐԱԿՅՈԶ (ՍԵՎԱԶ, ՍԵՎ ԱՂՔԵՐ)

Այստեղ ընակվող հայերը՝ Փաշա պաղի վայրում, կառուցել են Ս.Հռիփսիմե անունով եկեղեցի[90], որի հետքերն այսօր չեն պահպանվել:

---

89 Մ.Բժշկյան, էջ 287

90 Նույն տեղում, էջ 329: